ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «16» 09 2019թ № 1428-Ա

ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԵՎ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՌԵԵՍՏՐ ՎԱՐԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի №246-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը և «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 7-րդ հոդվածի 5-րդ մասը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում շահագործողների հաշվառման վկայականի ձևը՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի մարտի 20-ի №246-Ա հրամանը:
4. ՀՀ ազատ տնտեսական գոտու շահագործողներին հաշվառելու և շահագործողներին տրված թույլտվության ռեեստր վարելու լիազորությունները վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության զարգացման վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Միեր Շահինյանին:

ԱՐՏԱԿ ՔԱՄԱԼՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Հավելված 1

_____

(ազատ տնտեսական գոտու անվանումը)

_____

(ազատ տնտեսական գոտու գործառնական տեսակը)

_____

(ազատ տնտեսական գոտու Կազմակերպչի անվանումը)

ՎԿԱՅԱԿԱՆ

ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում շահագործողների հաշվառման

Սույնով հաստատվում է, որ «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության _____ թվականի _____ որոշման և _____ ազատ տնտեսական գոտու Կազմակերպչի հետ կնքված _____ պայմանագրի հիման վրա՝ _____ հաշվառված է

_____ _____

(ազատ տնտեսական գոտու անվանումը) (ազատ տնտեսական գոտու գործառնական տեսակը)

ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում որպես

_____

(Ֆիրմային անվանումը)

«_____» _____ _____թվականին _____ համարի ներքո

և ստացել է ազատ տնտեսական գոտում գործունեություն իրականացնելու թույլտվություն գործունեության հետևյալ տեսակների մասով.

_____

_____ տարի ժամկետով:

Վկայականի տրամադրման ամսաթիվը «___» _____ _____թ.

Հաշվառումն իրականացրած լիազորված անձ _____

(ստորագրություն, Ա. Ա. Հ.)

Հավելված 2

Ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրի օրինակելի ձևը

1	Ազատ տնտեսական գոտու շահագործողի անվանումը
2	Գրանցման համարը
3	Հայաստանի Հանրապետության կառավարության՝ տվյալ շահագործողին ռեեստրում հաշվառելու վերաբերյալ որոշման համարը
4	Ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում հաշվառվելու վկայականի պատճենը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «04» 03 2024թ № 861-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1128-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով՝

հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի «Ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում շահագործողների հաշվառման վկայականի և ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրի օրինակելի ձևը հաստատելու, ռեեստր վարելու լիազորությունները վերապահելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի մարտի 20-ի №246-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1128-Ա հրամանի 4-րդ կետում «արդյունաբերության զարգացման վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Միեր Շահինյանին» բառերը փոխարինել «Արդյունաբերության քաղաքականության վարչության տնտեսական գոտիների և ենթակառուցվածքների զարգացման բաժնի ավագ մասնագետ Սոնա Մանուչարյանին» բառերով:

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ